



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐ ԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱՅ ՈՒՐԱԿԱՆ 18 ՅՈՒՆԻՍԻ 1854

ԹԻՒ 470

ԶՄԻՌՆԻԱՅ, 18 ՅՈՒՆԻՍԻ

Ի՞նչ օրագիրը՝ Մարտի Բեդրուպուրիի դահլիճին տուած ծանուցագրոյն հետեւեալ բայաւորութիւնը կուտայ .

« Լստորիան իր ծանուցագրովը կը հրաւիրէ զՌուսիան , որպէսզի Ղանուբեան իշխանութեց քաղաքները պարպելու ժամանակ մը որոշէ . միանգամայն կը խնդրէ հասարակաց օգտին համար որ պայմանաժամը երկուր չըլլայ . Լստորիան այս խնդիրը կընէ , միմայն Ռուսիոյ և Բարձրագոյն Ղրան մէջ եղած վաղեմի դաշնագրութեց վրայ հաստատուն կենալով : Լստորիոյ և Բրուսիոյ մէջ եղած դաշնագրութիւնը ամենեւին չյիշէր , միայն ինքը կընէր իրաւանայ իբրեւ մեծ տէրութիւն , և ամենէն մօտ դրացի տէրութիւն որ այժմեան պատերազմին մէջ ամենէն աւելի ուղղակի իրաւունք ունի : Լստորիոյ ծանուցագիրը ոչ պարտաւր կը ցուցնէ , և ոչ գրգռիչ ընթացք մը ունի , իր խնդիրը կը կայանայ ի վերայ հիմանց ազգային վաղեմի դաշնագրութեանց , և կը վերջացնէ ըսելով , թէ Լստորիոյ վերջի որոշումը յիշեալ ծանուցագրոյն պատասխանէն կախեալ է :

« Որքինքն-Քրիստի վերոյիշեալ ծանուցագրոյն վրայք հետեւեալ խորհրդածութիւնը կընէ .

« Լստորիան կը հաղորդէ Ռուսիոյ ի մէջ կայ . տեր և Բրուսիոյ թագաւորին եղած նիդակակցութեան դաշնագրութիւնը , և կըսէ թէ այս դաշնագրութիւնը բնական հետեւութիւնն է Վէնայի խորհրդոյն սկզբունքներուն , որոնց մասնակից եղան Լստորիան և Բրուսիան , և որոնց վրայք յիշեալ երկու տէրութիւնները , Բրեմսեան տէրութիւններուն հետ պարտաւորեցան , Բրեմսեան գործքերը սկսեցնել ի վեր : Լստորիան սկզբունքներն են Ռուսաց Ղանուբեան իշխանութիւնները գրաւելին ամէն ազգաց իրաւունքներուն դէմ ըլլալով : Ռուսաց զօրքերուն օսմանեան գաւառներէն ետ քաշուիլը հաշտութեան անհրաժեշտ պայման պիտի համարուի չորս տէրութիւններէն , որոնց փոխանորդները Վէնայի խորհուրդը կազմեցին , որուն հաստատ որոշումն է , Սուլթանին անկախութիւնը , և օսմանեան տէրութեւն ամբողջութիւնը պահել :

« Օսմանցագիրը կը յիշեցնէ նաև տէրութեց ըրած անընհատ ճիգը խաղաղութեամբ վերջացը :

նեւ յիշեալ Բրեմսեան գործքը վէճը , և խորին տրտմութիւն կը ցուցնէ Լստորիայի խաղաղութեանը ցաւալի կերպով մը վերադառնալուն որ դէպքերը ընդարձակուելուն բնական հետեւութիւնը եղաւ , որնոր դիւրին էր նախագուշակել այն քաղաքականութենէն որուն երբէք բոլոր Լստորիայի ուրիշ մեծ ազգերը հաճութիւն չունեցան , և որուն դէմ բոլորն ալ և մասնաւորապէս Լստորիան և Բրուսիան բարեկամական ազգարարութիւններ ըրին : Հետեւաբար ծանուցագիրը կը յայտնէ , թէ ստիպողական հարկը կը պարտաւորէ զԼստորիան , բոլոր Վերմանիայի և իր օրինաւոր շահուցը համար որք կոխել օսմանեան Ղանուբեան գաւառաց պարպուելուն վրայով : Վերջապէս մեծապէս կը յուսան թէ Ռուսաց կայսրը շատ ժամանակ չանցած հաճութիւն պիտի տայ այս օրինաւոր խնդրոյն , որով զԼստորիան և զբոլոր Վերմանիան կազատէ այն ցաւալի հետեւանքներէն որ պիտի ունենան ետքը , թէ որ յիշեալ խնդիրը մերժէ : Ուստի կը կարծուի թէ Ռուսաց կայսրը ժամանակ պիտի որոշէ յիշեալ օսմանեան գաւառները պարպելու : Լստորիական այս ծանուցագրոյն ի պաշտօնէ պատասխանը , յունիսի 20 էն մինչև 24 Վէնա կընայ հասնիլ :

« Դաւանալ ար Բանթալիէի գաղղիարէն օրագրոյն յունիսի 19 թուոյն մէջ հետեւեալ յօդուածը կը կարդամք :

« Ռուսի Բանթալիէի գաղղիարէն և Սիւլթանի պաշարումը :

« Ռուսք չեն վհատիր , Սիւլթանիոյ Բապտիստիստը ըստած ամբողջին դէմ բացած ականեւորուն մեծամեծ կորուստներով անյաջողութենէն : Երբէն պատմած ենք մինչև ամսոյ 3ին այս կերպ յարձակմամբ ըրած մեծ կորուստներն : Եւսոյ 7ին և 8ին դարձեալ յարձակեցան նոյն ամբողջին վրայ : և ահաւասիկ ամսոյ 14ին և 18ին ի կոտորածով հասած պաշտօնական թղթերէն կիմանամք թէ ինչ վախճան ունեցած են այս նոր յարձակումները :

« Եւսոյ 7ին Ռուսք , այս չորրորդ անգամ Բապտիստիստը ամբողջին մէկ կողմը սկսան ական փորել որ խրամատելով տիրեն անոր : Երբ որ այս կարեւոր գործոյն կաշխատէին , ամբողջին

հրամանատարը իր պաշտպանութեան ոյժը թուլացուց , և քիչ մը անոր ետեւէն , այսինքն ուղղակի անոնց ականին դէմ , թնդանթներու զօրաւոր շարք մը հաստատեց , հոգ առնելով որ անոնք չտեսնեն :

« Շատ չանցաւ Ռուսք կրակ տուին իրենց ահկանին արքանեց խրամատեց նոյն տեղը բայց երբ Ռուսաց յարձակող զօրաց գունդը ներկայացաւ , (Օսմանցիք սկսան իրենց նոր հաստատած թնդանթի շարքերէն անանկ ահագին կրակ ընել անոնց վրայ երկաթի կտորներով (սալթիք) , որ մահ և սոսկում պատճառեց յարձակողներուն , և մասնաւորապէս երբ որ միւս կողմէ ալ օսմանցուց հոն պատրաստ կեցած 7-8000 հետեակ , հեծելազօր և թնդանթածիգ զօրքերը սաստկութեամբ դուրս ելան վրանին քաղցին , կատարելապէս փախուցին Ռուսաց զինքերը : որոնք շատ մեծ կորուստ ըրին թէ զօրաց և թէ ռազմավթերաց : կըսեն թէ , 2000 հոգի մեռած ըլլան Ռուսաց կողմէն և այնչափ ալ վերաւորուած . բայց օսմանցուց կորուստը շատ քիչ է եղեր :

« 8ին առաւօտեան ժամը 2ին Ռուսք դարձեալ յարձակեցան . իրենց նպատակը օսմանեան զօրքը խաբէութեամբ պարսպին եզերաց վրայ բերել էր . որպէսզի խուռն բազմութեամբ հոն լցուած ատենին պարսպին տակը պատրաստուած երկու ականները ճալթեցնելով օդը հանեն զանոնք : Բայց օսմանեան զօրքը այս որոգայթը չինկան : ոչ միայն պարսպին եզերաց վրայ չգուժարեցան , այլ և հոգ տարին հոն տեղի թնդանթները անգամ ներս քաշելու : Ռուսի ականներուն ճալթիլը ուրիշ բան չբաւ բայց միայն պատերազմ մէկ մասը փլուց և Ռուսաց զօրքերէն քանի մը հոգի սպաննեց , որոնք այս անգամ ևս ստիպուեցան ետ քաշուիլ : Սակայն այս շարունակ յարձակումներէն , Բապտիստիստը մօտը եղած ամբողջ յետին աստիճան աւելաւ դառնալուն օսմանցիք պարտաւորեցան ներս քաշուիլ , ուր փոքր աստիճանաւոր մը կանգնելով , մինչև վերջի թուերով առնուած լուրերէն կը տեսնուի թէ տակաւին յիշեալ նորա կառույց փոքր բերդը լմցած չէր բայց շատ յառաջացած , և երկմունքը Բապտիստիստի նման պաշտպանուելու բարեբաղդութիւնն ու

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐ ԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՆ ԶՐԵՒՈՏ ՕՐ

(Հարաւստիութիւն) (1)

« Շատ յօժարութեամբ իմ զաւակս , ասոր վրայով կը խօսիմք ճաշէն ետքը » : Սոփիան կերակրոյ սրահը մտնալուն շատ զարմացաւ երբոր տեսաւ սեղանին վրայ երեք սպասք (սուֆրայ թագը) : Գրուած երկուքին տեղը , վասնորոյ հարցուց թէ այս երրորդը որն է համար է :

« Բիշ մը համբերէ զաւակս հիմա կը հասնին » :

« Նոյն վայրկեանին Սոփիան գրեթէ ոտքի ձայն մը առաւ և աչքերը դէպ ի դուռը դարձնելով տեսաւ որ իւր հօրեղբորը դուստրը թեւեղան ներս կը մտնէր , որ շատ ժամանակէ հետեւ եկած չէր : Եւսոյ մէկ կողմէ տեսնալուն մեծ ուրախութիւն ունեցան , վասնոր այս երկու աղջիկները շատ տէր ունէին մէկ կողմէ կու վրայ : Սոփիան զարմացման մէջ էր թէ ինչ երջանիկ թիպուած մըն էր այս » որ ճիշտ իրեն տխուր և միտակ մընայած ատենը իրեն մտերիմ սիրելին իր քովը կը տեսնէր : Բայց այս այցելութիւնը դիպուա-

ծով եղած չէր : Սոփիային մայրը իր սիրելի զաւակին վրայ հոգ տանելով , անկէ զատուելէն քիչ մը առաջ թեւեղանին ծնողացը աղաչէր էր որ հրաման տան իրենց աղջկանը քանի մը օր Սոփիային քովը կենալու , և այս այցելութենէն Սոփիային ունեցած հաճութիւնը և ուրախութիւնը աւելցնելու համար որոշէր էին որ չմտնուեն անոր այս բանը : ու թեւեղանի յանկարծուստ գայ : Տանը մէջ շատ փոփոխութիւններ եղած էր , և մանաւանդ պարտիզին մէջ քանի որ թեւեղանի այցելութիւն ընելու եկած չէր իւր հօրեղբոր դստերը , և Սոփիան նոյն վայրկեանին շատ կուրախանար և մեծ հաճութիւն կը գտար իր սիրելի բարեկամուհիին պատճառելու ուրախութեանը համար , անոր ցուցնելով ծառուղի ճանապարհը պարտեղին , լաբիւրին թոսը , գեղեցիկ ծաղիկնց ածուռ և բազմաթիւ արձանները , վերջապէս այս փառաւոր գեղի տանը ամէն գեղեցիկութիւնները :

« Բայց «մարդս կառաջարկէ , և Լստորիան կը կարգադրէ » կըսէ առաւել , և շատ անգամ այն ուրախութիւնը որուն վստահ է մարդ , նաև նոյն կէտին որ կը յուսայ թէ պիտի վայելէ » անկայտ և անհնար կը լլայ : Եւստատիկ ասանկ և

ղաւ այս պարագայի մէջ , վասնոր հետեւեալ օրը որ որոշէր էին չընդգայտութեան համար որ կ'երեւար թէ գեղեցիկ և զուարճալի օր մը պիտի ըլլայ , այս երկու բարեկամուհիները արթննալու նուն պէտք տեսան որ սաստիկ մրկախառն անձրև կուգայ , և բոլոր երկիրքը գոցուած է թանձր և խաւարին ամպերով : Տակաւին առաւօտ եղած չէր , կը յուսային որ օդը պիտի պայծառանայ , և արեւուն ճառագայթներուն պայծառութիւնը ամպերը պիտի փարատէ : այսպիսի յուսով իրենց նախաձաշիլը ըրին սովորական ակորժակով : Բայց ամենեւին ամպերը փարատելու նշոյլ մը չէր երեւար , և յիշողն տիրին որ բաւական հմտութիւն ունէր օգերեւութեան գնութեանց կը գուշակէր որ բոլոր օրը անձրևը պիտի շարունակուի :

« Եւսոյ ամբողջ զուարճալի բան մը չէր բայց ինչ ընել պէտք էր : Սոփիան աղէկ գիտնալով թէ որ և իցէ պարագայից մէջ չուզած բանն ալ պէտք է որ մարդ սիրով ընէ » երբոր հարկը առնակ կըստահանէ , յօժարութեամբ Լստորիան կամացը յանձնեց զինքը , առանց արտաքին և խոժոռելու : Բայց որպէսզի մինչև իրիկուն պարագայ չկենայ միայն անձրևին նայելով , գնաց

(1) Տես լրագրոյն նախընթաց թիւը :

հով քլալու համար :

— Այս ճիշդ լինելով հասարակաց խորհրդա-
րանին ծանոց թէ Սե Գուրգեն և Պալքիկին
մէջ Սուսաց նաւահանգիստները պաշարելու
հրամաններ խրկուեցին և այս պաշարումը պիտի
ըլլայ անհրաժեշտ դրոշակի նաւերուն :

— Երբեք չի կարող Նաւատորմի ղեկներէն մաս
մը Ներմակ ծով խրկուեցան բայց առանց պա-
շարում հաստատելու հրամանաւ :

— Սահաւոր պատերազմական պաշտօն մը
հաստատուելուն պատճառաւ, անգղիական դահ-
լիճին հետեւեալ քանի մը փոփոխութիւնները
տեղի ունեցան :

Ներքապի գաւթը կառավարութեան խոր-
հրդական անուանեցաւ նորահաստատ պատե-
րազմական պաշտօնարանին, և գաղթականաց
պաշտօնաց անուանեցաւ Սրբ Ն. Կրէյըր. մաս-
նաւոր խորհրդայ նախագահութիւնը լորտ Ն.
Պատէլին տրուեցաւ : Ըրտ Կրէյիլը առանց
պաշտօնի կըմնայ առայժմ, սակայն կը հաստատեն
թէ, մօտ օրերս Լանքասթըրի գրքութեան ատե-
նադարութեան տնօրէնը պիտի տրուի անոր,
որ արածութիւն կուտայ դահլիճը մտնելու :

— Ըրտ Ն. Պատէլը հասարակաց խորհրդա-
րանին իմացուց, թէ կառավարութիւնը և թա-
գաւորական օրէնսդէտները որոշեցին որ Յոնիա-
կան դրօշակը վեհափառ թագուհին պաշտօնա-
նութեան տակը ըլլալով չկրնար չէզոք սեպուիլ :

— Թորքոմէն Պրէզիտի օրագրին կը գրեն, թէ
Լրեմոտեան տէրութիւնները զՇուէտը և զՏա-
նիմաքան իրենց հետ միաբանելու հրաւիրե-
ր են, բայց Լայտը անոր հակառակը կըսէ, որպէս
թէ Շուէտը ստիպեալ է զՏանիմաքան դաշնա-
ցութեան Գաղղիացուց և Նիգղիացուց հետ,
չեմք գիտեալ կրնա իրեն լրագրել թէ Լրեմոտեան
տէրութիւնները այս առաջարկութիւնը ըրած
են ինչպէս կրնա Պրէզիտի թերթը, սակայն կը
նամք ըսել թէ Թորքոմի թղթակիցները բոլ-
րովին անօգուտ կըսեպէն յիշեալ առաջարկու-
թիւնը, վասնոր կառավարութեան յօժարութիւն
և կարծիքը կը ցուցնեն որ հարկը պահանջելու
ժամանակը Շուէտի չէզոքութիւնը պիտի փոխուի
Սուսիոյ դէմ թշնամական գործողութեան :

— Իրեն օրագիրը իր յունիսի 7 թերթին մէջ,
Պալքիկին անգղիական նաւատորմի ղեկի վրայ
հետեւեալ լուրեր կուտայ :

Սեր վերջի պատմած առաջին պատերազմա-
կան գործողութիւններէն զատ, Պալքիկի վերջի
լուրերը նոր գործողութիւն մը չեն յիշեր. հա-
սարակորէն կը կարծուի թէ ծովագետ Նէթիլէն
գոհ ըլլալով չէ միայն Հանկոյն բերդերը աւե-
րելով, այլ կուզէ որ այն տեղը գրաւէ գոնէ
քանի որ եղանակը նպաստաւոր է :

Հանկոյն գիւրը Ֆինլանտիային արեւմտեան
ծայրն է, որ Ֆինլանտեան և Պրուսիան ծոցե-
րուն կը հարմայէ : Եւ փոքրիկ կղզին անգլիոյ նա-
ւահանգիստ մըն է որ կրնայ մեծամեծ օգուտ
ներ ընելու, ապագայ պատերազմական գործո-

ղութեանց իբրեւ հաստատուն տեղ մը նաւերուն
և պաշարաց շտեմարան, իբրեւ հիւանդանոց վե-
րաւորելոյ և հիւանդաց և այլն. նաեւ կղզին
բաւական ընդարձակութիւն չունենալուն քիչ
զօքով ալ կրնայ աղէկ պաշտպանուիլ :

Սուսերը լաւ գիտնալով այս կղզին կարեւոր
գիւրը մը ունենալը, մեծամեծ նախապատրաս-
տութիւններ ըրիւր են, և ոչ թէ Թորքոմի օրա-
գիրներուն ըսածին պէս ամայի թողուցեր են :

Նիգղիական պատերազմական նաւերը որ ուղ-
ղակի Նէթիլէն ծովագետին հրամանին տակը չեն,
նաւախումք մը կազմած են Քօրի ծովագետին
հրամանատարութեամբ ու Ֆինլանտիայի հա-
րաւային արեւմտեան ծոցին ծայրը Սիկայի ծոցը
պաշարեալ են, որպէսզի Քրոնշտատի Սուսաց
նաւատորմին վրայ հասնեն :

Ծովագետ Լրեմոտիին հրամանին տակը ե-
ղած թեթեւ նաւատորմիք փոքրիկ նաւախմբե-
րէ բաղկացեալ, յորտեւ են բոլոր Պալքիկի ծո-
վուն ընդարձակութեան մէջ Լուսնի Գեղէն
մինչև Պրուսիան ծոցին ներքին կողմը :

— Սիկայի քը Լրեմոտ օրագիրը կը ծանուցանէ
թէ հինգերորդ գունդ մը այս օրերս կազմուե-
ցաւ արեւելեան բանակին համար, որուն հրա-
մանատարութիւնը Ս. Շարլ տը Վայլէան գո-
րապետին յանձնուեցաւ. այս զօրաց գունդը
երկու խումբէ բաղկացեալ է, ունի նաեւ եր-
կու գունդ թնդանթածիք զօրք և մէկ խումբ
ղինուորական ճարտարագետներ. արդէն առա-
ջին գունդը թուրքներէն նաւ մտած պիտի ըլլայ :

Սեւանիկէն կը գրեն յունիսի 15 թուով Կաղ-
ղիական պատերազմական Սրբ շոգենաւը սրարուն
Սուսէնի հրամանատարութեամբ ամսոյս 11ին
առաւօտուն հասաւ հոս, Պրէզիտէն, Վ. օրէն և
Լ. յորոգէն գալով, և Ս. ակեդանիա ելէր գլխա-
ւոր աւազակաց Նամի Քարապատոյն հետ տես-
նուեր է, որուն Լ. թէրքի նոր դահլիճի հրամա-
նագիրը յանձնեալ է. որպէսզի թուրքստանի
սահմաններէն քաշուի և Յունաստան դառնայ :
Սուսի Սուսէն համազօր զՔարապատուն աս
հրամանին հետեւեալով, որ և ոչ ամենափոքր
յոյս մը ունենալով իր անխելք ջանքը յաջողելու
փութացաւ պայմանագրութիւն մը ընդունելու
և առաջարկութիւնը փոխադրելու զինքը ընկեր-
ներով ի Քաղիկի : Սուսի գաղղիական հրամա-
նատարին իր տնայալ Օ. ակապորտուն իբրեւ
պատանդ յանձնեց ի հաստատութիւն իր առաւ-
ստընին : Սուսի Սուսէն այս կերպիւ պահանջով
ըլլալով, Սեւանի եկաւ մեր կառավարչին հետ
խորհելու, որմէն հրաման ստացաւ այնտեղի օս-
մանցի հրամանատարներուն որպէսզի ամենեւին
հեղինակուց անկից նաւ մտնելուն արգելք
մը չըլլան :

Սրբ շոգենաւը 12ին ճամբայ ելաւ օսմանեան
դրօշակով կրէթ մը հետք քաշելով, անշուշտ
մինչև հիմա իր պաշտօնը կատարած պիտի ըլլայ :
Փառք Լաուրենց որ բոլոր այս փոփոխութիւն
պէս անցընել իր սենեակին մէջ :

Իրիկուն եղաւ. և այս երկու աղջիկները մէկ
մէկու աւելի հաճոյական վաղիւ մը բարեմաղ-
թեւէն ետքը գնացին պառկելու : Իրիկորդ օրը
արթննալով Սուսի պատահական և տախտակէ
փեղկերը բացաւ, յուսալով որ օգը բացուած
ըլլայ ինչպէս որ կը ցանկար ալ ոչ այնչափ իրեն
համար լրջափ իր սիրելի աղջկանին բաղձանքը
ըլլած տեսնելու : Իայց աւաղ, եւնչ տխուր
տեսարան. անձրեւ տակաւին սաստիկութեամբ
կուգար և երկնքը առջի օրուան պէս բոլորովին
մթնցած էր : Իարի աղջիկը չկրցաւ զսպել իր
թեթեւ հառաչանքը, որոնք իր հօրեղծոր դուստ-
րը լսելով ինչ պատճառաւ ըլլալը գուշակեց :
« Զիրաւի շատ մեծ արգելք մըն է աղաղակեց,
երկու օր այսպէս շարունակ անձրեւը այնպիսի
եղանակի մը մէջ որ իրաւունք ունի մարդ յու-
սալոր տաք և բաց օդ մը պիտի վայելէ » : Եւ
մինչև նախաձառնիկն ատենը այս տրտուեցող կը-
նէր :

(Մտադրող յաջորդ թուով)
Թարգմանեաց ի գաղղիներէն,
Սիբար Լ. Պապիստան,
աշակերտ. Սիբար, Քարապատին :

գիւ վերջապէս օսմանցուց հողէն ելան գային :

Նաւատիկ այս առտու Վ. օրէն եկած Լաու-
րիական լայտ շոգենաւին Վ. օրէն և լարիսային
բերած նամակներուն տուած լուրերը ապստամբ
Յունաց վրայօք : Քարապատ է իրենց գլխաւոր
տեղը ուր գումարուած են : լարիսային կառա-
վարիցը գունդ մը զօրք կը լարաւորատուէ անոնց
վրան քալելու, 7000 կանոնաւոր և 8000 անկա-
նոն զօրք ունի որ բաւականէն աւելի է ապահով
ըլլալու գործողութեւն յաջողելուն. ապստամբ-
ները կրէպէս զարնուելնէն և այս մեծ գլխիկ
չորրորդ մասին երեքը աւերելնէն ետքը, բնա-
կիւնները ստիպեալ են իրենց հետ տանելու Լրեք
հրէայ որոնք առեւտրական գործքերով այն կող-
մերը ճամբորդութիւն կընէին, ապստամբաց
ձեռքը ինկան, որոնց վիճակին վրայով մեծ ան-
հանգստութեւն մէջ են : Օ. ակապորտի բնակիչները
ապստամբաց իմացուցին որ՝ եթէ յանդգնին
փորձ փորձել ինչպէս միտքերնին դրած էին,
իրենց վրայ յարձակելու, պատրաստ են ձեռ-
քերնին զէնքով զիրենք ընդունելու :

— Իորքաֆօնապա քը Պրէլն օրագրութեւն մայիսի
30 թուոյն մէջ կը կարդամք, թէ այնպէս կը կար-
ծեն որպէս թէ Սուսի ղեկավար, տեղապահ
զօրապետ Հէյլըրունը արտաքին կարգի պաշտօ-
նով փոխիլ և Լոնտոն պիտի խրկէ Յունաս-
տանի օգտին վերաբերեալ իրաց համար :

— Լ. թէրքէն կը գրեն, թէ Ս. Տէրեանին, որ
արդէն Յունաց կառավարութեան կողմէն Ս.
Պուսը դեպի անուրիութիւն ըրած է, նորէն նոյն
պաշտօնը իրեն տուեր են. երբոր Ս. Ս. ակա-
պորտան խորհրդայ նախագահը Լ. թէրք համի
որ օրէր կը պատուի, ինքն ալ Լ. թէրքէն ի Վոս-
տանի անուրիութիւն, երթալու ճանապարհ պիտի ելլէ :

— Իրէվէնային եկած նամակները կը ծանուցա-
ցանեն, թէ Յունաց աւազակներէն մնացածնե-
րը ցրուցան եղան ի Սուսի քարիւ և անոր շրջա-
կանները և Լալիւսի մէջ (հարաւային Լալա-
նիս) ուր առայժմ ապստամբութեւն հետք չմնաց,
և բնակիչները Պուստ էֆէնիսին աղաչեցին,
որպէսզի իրենց հրաման տայ Յունաց գունդ մը
կազմելու, որ եթէ ապստամբները դարձեալ
զենք առնելու ըլլան՝ զանոնք հալածեն : Պուստ
էֆէնիսին Լանեա գնաց, ուսկից թեւադիւս պի-
տի երթայ որպէսզի այն գաւառները թափա-
ռական աւազակներէն ազատէ :

— Լ. թէրքէն յունիսի 21 թուով կը գրեն : Երբ
դահլիճը կուզէ հաստատ ընթացք ունենալ,
բայց թագաւորը որքան որ կարելի է արգելք
կըլլայ : Պաշտօնեաները ոտք կը կոխեն թագաւո-
րին մասնաւոր խորհրդական մօրիւ Վանդուստը
իր պաշտօնէն հանելու. բայց թագաւորը պա-
տախտան չտար :

Հաճի Լ. թէրքն տակաւին չդարձաւ իր հայ-
րենիքը, կըսեն թէ գիր մը գրած ըլլայ իր որդ-
ւոյն, որով կը ծանուցանէ թէ պիտի չհնազանդի :

Կաղղիոյ, Նիգղիոյ և Լաւորիոյ դեպի անե-
րը անցեալ շաբաթ պաշտօնական հացիկերով
ներ տուին, 22ին Քալէրի զօրապետն ալ 150
հոգիի Նիգղիոյ և Կաղղիոյ պաշտօնատարաց հաց-
կերով մը ընելու է :

— Սրբայէն յունիսի 22 կը գրեն, Քալէրի թըն-
դանթատար մակոյկը և ձիաւոր զինակիւնները
Սրբոնիէն ետ դարձան, որոնք ծովապատակնե-
րը բռնելու գացեր էին, բայց չգտեր են :

Կաղղիական շոգենաւ մը Սրբոնի եկաւ և
բոլոր յունաց նաւերուն և մակոյկներուն մէջ
գտած զէնքերը գրաւեց. Նոյնը ըրաւ Սրբոն
և թիւսո կղզիները : Իսկոյն որ այս լուրը հասաւ
հոս, բոլոր նաւապետները իրենց նաւերուն
մէջ գտնուած թնդանթածիքները, լայնաբերան
հրացանները և սուրերը իրենց և իրենց բարե-
կամաց տուները պահեցին :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 14 ՅՈՒՆԻՍԻ

Իարձրագոյն Պուսը իր փոխաւորութեան գոր-
ծոյն որ ի կախ մնացեր էր, այս անգամ երկու
գործակալ խրկեց ի Լոնտոն և ի Փարիզ, որ
բանը կարգի դնեն. որոց մէկը մօսիւ Պալք անգ-
ղիացի վաճառականն է, և միւսը Տիւրան գաղ-
ղիացի վաճառականը. նաեւ նոյն շոգենաւով
ճամբայ ելաւ մօսիւ թրուով Էօֆէլ որ առա-
ջուց այս գործոյն վրայօք աշխատելու է :

